

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2016 թվականի
դեկտեմբերի 22-ին

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերից հանել «վերցնելու և հարկային հաշվառումից հանելու» բառերը:

Հոդված 2. Օրենքի N 1 հավելվածում՝

- 1) 4-րդ տողում «35,0» թիվը փոխարինել «18,0» թվով.
- 2) 12-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ տողեր.

«	13.	Արտադարձական դաստիարակություն մշակույթի բնագավառում	12,0	5,0	3,0	
	14.	Թիթեղագործական գործունեություն	12,0	5,0	3,0	
	15.	Զողման գործունեություն	54,0	43,0	32,0	
	16.	Խառատի գործունեություն	54,0	43,0	32,0	»:

Հոդված 3. Օրենքի N 2 հավելվածում՝

- 1) 7-րդ տողը «նորոգում» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով ավտոմեքենաների լվացում» բառերով.
- 2) 10-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-13-րդ տողեր.

«	11.	Մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում	ավտոմատ	15,0	12,0	9,0
---	-----	--	---------	------	------	-----

12.	Մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպում	ավտոմատ	15,0	12,0	9,0	
13.	Հեծանիվների, անվաչմուշկների, սկուտերների, հիրոսկուտերների, հովերբորդների վարձույթ	հեծանիվ, անվաչմուշկ, սկուտեր, հիրոսկուտեր, հովերբորդ	54,0	32,0	21,0	»:

Հոդված 4. Օրենքի N 3 հավելվածի երկրորդ աղյուսակը 12-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ տողերով.

«	13. Արտադարոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում					
	14. Թիթեղագործական գործունեություն					
	15. Զոդման գործունեություն					
	16. Խառատի գործունեություն					»:

Հոդված 5. Օրենքի N 5 հավելվածի աղյուսակը 12-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-16-րդ տողերով.

«	13. Արտադարոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում				
	14. Թիթեղագործական գործունեություն				
	15. Զոդման գործունեություն				
	16. Խառատի գործունեություն				»:

Հոդված 6. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի հունիսի 30-ի ՀՕ-21-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «2016 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2017 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում կատարվում է Օրենքի N 1 հավելվածի 4-րդ մասով նախատեսված գործունեություն

իրականացնողների 2017 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար հաշվարկված արտոնագրային վճարի վերահաշվարկ և ավել վճարված գումարն ուղղվում է հարկ վճարողի ապագայում առաջացող արտոնագրային վճարի մարմանը և (կամ) վերադարձվում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի N 1 հավելվածի 13-16-րդ և N 2 հավելվածի 11-13-րդ տողերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնողներն արտոնագրային վճար վճարող համարվելու համար առաջին անգամ դիմում-հայտարարությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում և արտոնագրային վճարը վճարում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 օրվա ընթացքում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-41-Ն